ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9 հոդվածի համաձայն)

Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ծածկագիրը՝ «ԷԿԵՆԳ-ՇՀԱՊՁԲ-15/12-17/4»

«ԷԿԵՆԳ-ՇՀԱՊՁԲ-15/12-17/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 3-ի որոշմամբ Սպեցմաշ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար:

Հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները՝

1. Միկրորինգ ՍՊԸ
2. Ա.Զ. Գրիգոր Այվազյան
3. ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ
4. ԵՐՎԱՆԴԱ ՍՊԸ
5. Այյունեթվորքս ՍՊԸ
6. Իայսի Տելեկոմ ՍՊԸ
7. Սպեցմաշ ՍՊԸ

Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով՝ Սպեցմաշ ՍՊԸ-ն:

«ԷԿԵՆԳ-ՇՀԱՊՁԲ-15/12-17/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 3-ի նիստի թիվ 3 որոշման համաձայն պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացվելու Սպեցմաշ ՍՊԸ-ին:

Պայմանագիրը պատվիրատուի կողմից կնքվելու է «ԷԿԵՆԳ-ՇՀԱՊՁԲ-15/12-17/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում:

Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիր կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է: Անգործության ժամկետը 5 (հինգ) օրացույցային օր է:

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՓԲԸ